



შეფასებისა და გამომცდების  
ეროვნული ცენტრი

# Ընդհանուր ունակությունների թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու՝ բանավոր և մաթեմատիկական մասերից:

Յուրաքանչյուր մասը պարունակում է 40 առաջադրանք: Ամեն մի առաջադրանքին կցված է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Թեստի յուրաքանչյուր մասի վրա աշխատելու համար տրվում է 1 ժամ և 35 րոպե:

Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք պատասխանը:

**Թեստի առավելագույն միավորն է 80:**

**Մաղթում ենք հաջողություն:**



## Բանավոր մաս

## Տրամաբանություն

*Այս տեսքի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:*

## 1. Տրված է.

- միայն մեծահարուստ մարդիկ են բնակվում քաղաքից դուրս:
- Միայն քաղաքից դուրս բնակվող մարդիկ են կրում ակնոց:

Ո՞ր եզրակացությունն է բխում տրված նախադրյալներից:

ա) Բոլորը, ովքեր կրում են ակնոց, մեծահարուստ են,

բ) գոյություն չունի մեծահարուստ մարդ, որը կրում է ակնոց,

գ) գոյություն չունի քաղաքից դուրս բնակվող մարդ, որը մեծահարուստ է,

դ) բոլոր մեծահարուստ մարդիկ բնակվում են քաղաքից դուրս,

ե) ոչ մի մեծահարուստ մարդ չի կրում ակնոց:

2. Մարգահրապարակում տարբեր գույնի վերնաշապիկներով շրջանաձև կանգնած է հինգ ֆուտբոլիստ: Սպիտակ վերնաշապիկովը կանգնած է կանաչ վերնաշապիկովի կողքին, սև վերնաշապիկովը՝ դեղին վերնաշապիկովի կողքին, դեղին վերնաշապիկովը՝ կարմիր վերնաշապիկովի կողքին:

Ստորև թվարկածներից ո՞րն է **անհնար**:

- ա) Կանաչ վերնաշապիկովը կանգնած է սև վերնաշապիկովի կողքին,
- բ) սպիտակ վերնաշապիկովը կանգնած է սև վերնաշապիկովի կողքին,
- գ) կարմիր վերնաշապիկովը կանգնած է սև վերնաշապիկովի կողքին,
- դ) կանաչ վերնաշապիկովը կանգնած է կարմիր վերնաշապիկովի կողքին,
- ե) սպիտակ վերնաշապիկովը կանգնած է կարմիր վերնաշապիկովի կողքին:

3. Վրաստանի արգելանոցներում աճում են թխկենու, կաղնու և ընկուզենու ծառեր: Դրա հետ միասին հայտնի է.

- եթե այս արգելանոցում աճում է կաղնի, ապա այդտեղ աճում է նաև ընկուզենի:

Ստորև թվարկածներից ինչպիսի՞ արգելանոց չէր հանդիպի Վրաստանում:

- ա) Արգելանոց, որտեղ միայն կաղնի և ընկուզենի են աճում,
- բ) արգելանոց, որտեղ միայն թխկենի և կաղնի են աճում,
- գ) արգելանոց, որտեղ միայն ընկուզենի է աճում,
- դ) արգելանոց, որտեղ բոլոր երեք տեսակի ծառեր են աճում,
- ե) արգելանոց, որտեղ միայն թխկենի է աճում:

#### 4. Տրված է.

- գոյություն ունեն նսկեգոյն ձկներ:
- Բոլոր նսկեգոյն ձկները միայն ջրաբույսերով են սնվում:
- Յուրաքանչյուր ձկան համար, որը միայն ջրաբույսերով է սնվում, անհրաժեշտ է տաք ջուր:

Ստորև թվարկածներից ո՞րը կարող է սխալ լինել, եթե տրված դրույթները ճշմարիտ են:

- ա) Բոլոր նսկեգոյն ձկներին անհրաժեշտ է տաք ջուր,
- բ) գոյություն ունի նսկեգոյն ձուկ, որին անհրաժեշտ է տաք ջուր,
- գ) ոչ մի ձուկ, որին նույնպես անհրաժեշտ չէ տաք ջուր, նսկեգոյն չէ,
- դ) գոյություն չունի նսկեգոյն ձուկ, որին նույնպես անհրաժեշտ չէ տաք ջուր,
- ե) գոյություն ունի ձուկ, որը նսկեգոյն չէ և որին նույնպես անհրաժեշտ է տաք ջուր:

5. Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրները այսօրվա դրությամբ սրճի խոշորագույն արտահանողներն են աշխարհում: Վերջին տարիներին այս տարածաշրջանում տարածվեց բույսերի մակաբույծ՝ գուդափշուտա սունկը, որն այն դեպքում, եթե հյուրընկալող բույսը չի կարողանում ընկալել նրան, ներխուժում է սրճի տերևների և հատիկի մեջ և վնասում է: Գիտնականները ենթադրում են, որ **այս մակաբույծն ունի ներքին ուժ ամբողջությամբ ոչնչացնելու սրճի արտադրությունը:**

Թվարկածներից ո՞րն է **կասկածի տակ դնում** գիտնականների այս ենթադրությունը:

- ա) Գուդափշուտա սնկի մոտ առաջացավ կենսաքիմիական կամուֆլյաժի (գույնի փոփոխություն) ձև և այն պատճառով, որ տեսակից տեսակ բույսերի իմունային համակարգը կարող է փոփոխվել, բույսի մեջ ներխուժելու սնկի «ռազմավարությունը» յուրահատուկ է դառնում,
- բ) գուդափշուտայի ներխուժման պատճառով սրճի տերևները չեն կարողանում արդյունավետ ֆոտոսինթեզ, ինչը խոչընդոտում է բույսի ծաղկման և պտղի հասունացման գործընթացը,
- գ) այսօրվա դրությամբ որպես թեյի հայրենիք հայտնի Յեյլոնը, մի ժամանակ աշխարհում սրճի խոշորագույն արտահանող էր, բայց սրճի տերևների մակաբուծական հիվանդությունը այս մշակաբույսը այնտեղ լրիվությամբ ոչնչացրեց,
- դ) հետազոտողները կարողացան այնպիսի գեներ բացահայտել, որոնք բարելավում են սրճի բույսի ունակությունը ճանաչելու մակաբույծին և ակտիվացնելու պաշտպանական մեխանիզմները,
- ե) վերջերս գիտնականները հայտնաբերեցին նոր տեսակի սուրճ՝ ստենոֆիլիա, որը հին տեսակների համեմատությամբ, ավելի լավ է հարմարվում կլիմայի փոփոխություններին:



## Նախադասությունների լրացում

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:*

*Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կստացվի իմաստով արդարացված նախադասություն:*

6. ——— ժամանակ, երբ մենք ——— կանգնեցնել անարդարությունը, ——— կլինի ժամանակ, երբ մենք ——— :

ա) Երբեք չի գա / անգոր կլինենք/ որովհետև գոնե մեկ անգամ / չենք կարողանա բողոք արտահայտել

բ) Երբեք չի գա / կկարողանանք / որովհետև միշտ / կկարողանանք բողոք արտահայտել

գ) Կարող է գալ / կկարողանանք / բայց երբեք / կկարողանանք բողոք արտահայտել

դ) Կարող է գալ / անգոր կլինենք / բայց երբեք / չենք կարողանա բողոք արտահայտել

7. Հեղինակը ——— այնքանով, որքանով նրանց միջոցով ——— իր մտքերը, բայց հեղինակի և գործող անձանց միջև գոյություն ունի որոշակի ———, որովհետև հեղինակը ——— միմյանցից միանգամայն տարբերվող գործող անձանց՝ հանճարի և տգետի, գերու և բռնակալի՝ մտքերը:

- ա) նույնականացնում է սեփական անձը գործող անձանց հետ / չի հաղորդում / մոտիկություն նույնպես / համարժեք է հաղորդում
- բ) օտարացած է գործող անձանցից / ճշգրտորեն հաղորդում է / մոտիկություն նույնպես / համարժեք չի հաղորդում
- գ) նույնականացնում է սեփական անձը գործող անձանց հետ / ճշգրտորեն հաղորդում է / տարածություն նույնպես / համարժեք է հաղորդում
- դ) օտարացած է գործող անձանցից / չի հաղորդում / տարածություն նույնպես / համարժեք չի հաղորդում

8. Դեկարտը գտնում էր, որ ———: Նրա կարծիքով, ——— նոր իրավիճակներում խնդիրը լուծելու ունակություն է պահանջում: ———, այս տեսակետը ——— կենդանիների վրա կատարված փորձաքննությունները. Վոլֆգանգ Կելլերի հետազոտությունում կապիկը ——— ճանապարհով՝ դասավորում է արկղները միմյանց վրա և հասնում է ադամաթզին (բանանին):

- ա) ի տարբերություն մարդկանց, կենդանիները զուրկ են մտածելու ունակությունից / մտածողությունը ընդհանուր ոչինչ չունի բնագրի հետ, ի տարբերություն այս վերջինի, մտածողությունը / Թեն / կասկածի տակ են դնում / կարողանում է ադամաթուզը (բանանը) գտնել միանգամայն նորովի
- բ) մարդկանց նման, կենդանիների մոտ նույնպես հանդիպում է մտածողության սաղմ / մտածողությունը, բնագրի նման / Թեն / կասկածի տակ են դնում / կարողանում է ադամաթուզը (բանանը) գտնել միանգամայն նորովի
- գ) ի տարբերություն մարդկանց, կենդանիները զուրկ են մտածելու ունակությունից / մտածողությունը ընդհանուր ոչինչ չունի բնագրի հետ, ի տարբերություն այս վերջինի, մտածողությունը / Իսկապես / հաստատում են / կարողանում է ադամաթուզը (բանանը) գտնել միանգամայն նորովի
- դ) մարդկանց նման, կենդանիների մոտ նույնպես հանդիպում է մտածողության սաղմ / մտածողությունը, բնագրի նման / Իսկապես / հաստատում են / չի կարողանում ադամաթուզը (բանանը) գտնել նորովի

9. Ոչինչ չկա տրամաբանորեն հակասական հնարավորությունում, որ մարդը կամ այլ էակ վերապրի ցավ և այն չարտահայտի համապատասխան տիպիկ գործողությամբ: — , կարող ենք ենթադրել, որ վարքի և մտավոր վիճակի միջև կապերը — : Որոշակի վարքը — կարող է — :

- ա) Հետևաբար, / միշտ չէ, որ միանշանակ են / հաճախ / նշանակել բոլորովին այլ մտավոր վիճակ, քան այն առաջին հայացքից երևում է
- բ) Հետևաբար, / միշտ միանշանակ են / միայն հազվագյուտ դեպքում / նշանակել բոլորովին այլ մտավոր վիճակ, քան այն առաջին հայացքից երևում է
- գ) Չնայած դրան, / միշտ չէ, որ միանշանակ են / հաճախ / նշանակել ճիշտ այն մտավոր վիճակը, որը իրականում վերապրում է այս էակը
- դ) Չնայած դրան, / միշտ միանշանակ են / միայն հազվագյուտ դեպքում / նշանակել ճիշտ այն մտավոր վիճակը, որը իրականում վերապրում է այս էակը

## Ընթերցած տեքստի վերախմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերախմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:*

I Ամերիկյան ազատությունը, բոլոր այլ սկզբունքների հետ միասին, հիմնված է մարդու անձնական ազատության գաղափարի վրա: „We the People of the United States...“ – „Մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդս...“ – Ճիշտ այս բառերով է սկսվում Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, ինչը ընդգծում է իր քաղաքացիների համոզմունքը, որ պետության իշխանության աղբյուրը միայն և միայն ժողովուրդն է: Այս բառերը նույնպես՝ „A More Perfect Union“ – «Առավել լիակատար միասնություն» – ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին իսկ պարբերությունում հանդիպում է որպես գաղափար, որն արտահայտում է ժողովրդի ձգտումը դեպի լիակատարություն, դեպի պետության զարգացում: Ճիշտ այս գաղափարների արտահայտությունն է **ջազ** երաժշտական ժանրը:

II Ջազի հիմքերը Ամերիկայում տարածված եկեղեցական օրհներգներում՝ սպիրիչուելսներում պետք է որոնենք: Ջազի ձևավորման գործընթացում նշանակալից էին նաև հանրահայտ օպերային արիաները և, ինչ ասել է պետք, աֆրիկյան բազմազան ռիթմերը: Ազատ ջազի հայրենիք համարվում է **Նոր Օռլեանը**: Այն ԱՄՆ-ի միակ մեծ քաղաքն էր, որի ֆրանսիական մշակույթի վրա հիմնված բարձր հասարակությունը բարոյականության, զվարճության կամ երաժշտության հարցերում սահմանափակված չէր բրիտանական խիստ, պուրիտանական գաղափարներով: Այս քաղաքում աֆրոամերիկացիները ավելի լավ պայմաններում էին ապրում՝ բնակելի թաղամասերը նվազ էին սեգրեգացված (անջատված) և սևամորթ փոքրերը սովորում էին սպիտակամորթների հետ միասին: Նոր Օռլեանում, Հարավի մեծ նավահանգստային քաղաքում, բոլոր ցեղի ծովայիններ էին միախառնվում: XVIII դարի երկրորդ կեսից Նոր Օռլեանում աֆրոամերիկյան գերիները հավաքվում էին տոնավաճառում, որը ավելի ուշ Կոնգոյի հրապարակ անվանվեց (գերիների մեծամասնությունը Արևմտյան Աֆրիկայից և Մեծ Կոնգոյի ավազանից էր): Այստեղ տեղի էր ունենում աֆրիկական պարերի փառասոն:

Անցնել հարցերին. [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)

III Ավելի ուշ եվրոպական ծագման ամերիկացիները ոչ միայն հավանություն էին արտահայտում աֆրոամերիկյան երաժշտության նկատմամբ, այլև երկրպագում էին այդպիսի երաժշտության կատարողներին: Ճիշտ այս թաղամասում ծնվեց Լուիս Արմստրոնգը, ով 16 տարեկան հասակում արդեն հանրահայտ երաժիշտ դարձավ: Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված իրադարձությունների հետևանքով շատ երաժիշտներ մնացին առանց աշխատանքի: Նրանցից շատերը, այդ թվում Լուիս Արմստրոնգը, բնակության համար տեղափոխվեցին Չիկագո: Նոր Օռլեանից ջազը ուղղորդվեց Միսիսիպի գետով և Ամերիկայի հյուսիսային նահանգներում, իսկ առանձնապես Չիկագոյում ձեռք բերեց հանրաճանաչություն:

IV Ջազում տարբերվող երաժիշտներ սկսում են երաժշտական երկխոսություն, հարաբերություններ: Ժողովրդավարության գաղափարը ջազում լավ է երևում՝ ամբողջ բենդը յուրաքանչյուր անդամին տալիս է հնարավորություն նվագարանով ասելու իր ասելիքը: Իսկ ասելիքը երբեք գրված չէ: Դրա սկզբունքը ճիշտ այն է, որ մեկնաբանությունը լինի նույն բոպեին երաժշտի սրտից բխած մեղեդի: Համապատասխանաբար ջազը երաժշտության ամենաանկեղծ ժանրն է: Ջազբենդերում գոյություն ունի երաժշտական ազատության զարմանալի զգացում, ինչը դրսևորվում է իմպրովիզացիաներում և սոլո ելույթներում:

V Ջազային ստեղծագործությունները ստեղծվում են կատարելիս և նույն տեսքով երբեք չեն կրկնվում: Ջազում անմիջականորեն կատարողն է ստեղծում երաժշտությունը կամ նա երգահանի հետ համահեղինակ է: Եթե դասական երաժշտությանը բնութագրական է հավատարմությունը նոտային ձայնագրության նկատմամբ և այստեղ մեկնաբանությունը և նվագակցողը երկրորդական են, ջազային պերֆորմանսը ինտերակցիայի և համագործակցության արտադրանք է, որում ուշադրությունը կենտրոնացած է կատարողի վրա, որի տրամադրվածությունից, փորձից կամ այլ կատարողից կախվածության համաձայն, կարող է փոխվել մեղեդին, հարմոնիան (ներդաշնակությունը) և մետրը:

VI Ջազը ամերիկյան մշակույթում, դարձավ անհատականության, ժողովրդավարության և ինկլյուզիվության խորհրդանիշ: Իսկ այս ամենին հետևեց նաև անձամբ աֆրոամերիկացիների իրավունքների ճանաչումը: Ջազը առանձնահատուկ երևույթ է երաժշտական աշխարհում: Այն նշանակալիորեն փոխեց պատկերացումները ոչ միայն երաժշտության, այլև մարդկային հարաբերությունների մասին:

Անցնել հարցերին. [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)



10. Ի՞նչ գործառույթ ունեն Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունից բերված արտահայտությունները տեքստի I պարբերությունում:

- ա) Այս բառերով ծանոթանում ենք այն գաղափարների հետ, որոնք դրվեցին շատ երաժշտական ժանրերի հիմքում,
- բ) այս բառերը ակնհայտ են դարձնում ամերիկացիների պատկերացումները ազատության, մարդու և հասարակության զարգացման մասին,
- գ) այս բառերով ծանոթանում ենք ԱՄՆ-ի քաղաքացիների տեսակետներին պետության իշխանության առաջին քայլերի մասին,
- դ) այս բառերը ակնհայտ են դարձնում, թե ինչ կախվածություն է վերաբերմունք է ԱՄՆ-ի քաղաքականության և մշակույթի միջև:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

11. Ստորև թվարկածներից ո՞ր բացատրությունը արդարացված **չէ**:

Նոր Օղևանը դարձավ ջազի հայրենիք, ինչին նպաստեց այն իրավիճակը, որ այս քաղաքում.

- ա) աֆրոամերիկացիները հնարավորություն ունեին Կոնգոյի հրապարակի վրա սիստեմատիկաբար կատարելու իրենց ազգային պարերը և երգերը,
- բ) աֆրոամերիկացիները ավելի լավ պայմաններում էին ապրում, դրա հետ միասին սևամորթները նվազ չափով էին առանձնացված սպիտակամորթներից,
- գ) ֆրանսիական մշակույթով դաստիարակված բարձր հասարակությունը սահմանափակված չէր դոգմատիկ մտածողությամբ,
- դ) հանրահայտ էին եկեղեցական օրհներգները՝ սպիրիչուելսները, օպերային երաժշտությունը և աֆրոամերիկյան երգերը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

12. „Նոր Օրէանից ջազը ուղղորդվեց Միսիսիպի գետով“ արտահայտությունը նկատառում է, որ.

- ա) Միսիսիպիի հյուսիսային մասի շրջակայքում բնակվող եվրոպական ծագման ամերիկացիները երկրպագում էին աֆրոամերիկացիների երաժշտությունը,
- բ) առանց աշխատանքի մնացած երաժիշտները բնակության համար տեղափոխվեցին Չիկագո, այդ թվում ջազային երաժշտության հայտնի կատարող Լուիս Արմստրոնգը,
- գ) Հարավի մեծ նավահանգստային քաղաքում ձևավորված ջազային երաժշտությունը հետզհետե Միսիսիպի գետի հարակից հյուսիսային նահանգներում նույնպես դարձավ հանրաճանաչ,
- դ) նավահանգստային քաղաքից տարբերվող ծագման և մշակույթի ժողովուրդը ավելի ուշ բնակվելու տեղափոխվեց Միսիսիպիի գետաբերանի կողմը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

13. Թվարկածներից ո՞րը այն յուրահատուկ նշանը չէ, որն առանձնացնում է ջազը դասական երաժշտությունից:

- ա) Երաժշտական ստեղծագործությունները ստեղծում է երգահանը և կատարողը դրա համահեղինակն է, դրա հետ միասին երաժշտին սուլո ելույթներում տրվում է մեկնաբանության և իմպրովիզացիայի հնարավորություն,
- բ) Երաժիշտը մանրամասն ճշգրտությամբ հետևում է նոտային ձայնագրությանը և նրա համար երկրորդական է ասելիքի անհատական մեկնաբանությունը և իմպրովիզացիան,
- գ) տարբեր երաժշտական մշակույթի ներկայացուցիչները սկսում են երաժշտական երկխոսությունը, հարաբերությունը, իսկ ասելիքը նախօրոք գրված չէ, իմպրովիզացիան է առաջնային,
- դ) ամբողջ ջազբենդը յուրաքանչյուր անդամի տալիս է ազատություն, նվագարանով արտահայտելու ասելիքը, կարողանալ երաժշտականորեն մեկնաբանել սեփական ապրումները:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

**14.** XIX դարի սկզբին ԱՄՆ-ում ստեղծվեց ժողովրդական թատերական ներկայացման յուրատեսակ ձև, որն անվանվեց **մինստրելժոու**: Այս շոուն բաղկացած էր կոմիկական բնույթի սկետչերից, պարային կամ երաժշտական ներկայացումներից: Այս բեմադրություններում, հիմնականում խաղում էին սպիտակամորթ դերասաններ, որոնք սև գույնով էին ներկում դեմքը, մարմնավորում էին աֆրոամերիկացիներին և նրանց ներկայացնում էին ծաղրանկարային: Մինստրելժոուում սպիտակամորթ երաժիշտները, երգահանները աֆրիկական երաժշտության հիման վրա ստեղծում էին սեփական երաժշտական ստեղծագործությունները, մինստրելժոուն բազմազան դարձրեց ջազը:

Ի՞նչ առնչություններ են ջազի և մինստրելժոուի միջև:

- ա) Մինստրելժոուում հիմնականում կոմիկական իրավիճակներ էին խաղացվում, աֆրոամերիկացիները ծաղրում էին սպիտակամորթներին, համապատասխանաբար այն չէր կարող նպաստել ջազային երաժշտության զարգացմանը,
- բ) Մինստրելժոուում սպիտակամորթները կատարում էին աֆրոամերիկացիների դերեր և այս ծաղրանկարային ներկայացումները լարում էին իրավիճակը սևամորթների հետ, թեև կոմիկական տարրեր հայտնվեցին նաև ջազային երաժշտության մեջ,
- գ) մինստրելժոուն ներկայացնում էր սպիտակամորթ երաժիշտների ասպարեզը ջազային երաժշտության ձևավորման գործընթացում և ցուցադրում էր հարմոնիկ (ներդաշնակ) հարաբերություններ նրանց և սևամորթների միջև,
- դ) մինստրելժոուում սպիտակամորթ երգահանները սեփական ստեղծագործությունները ստեղծելու համար ինտենսիվ կերպով կիրառում էին աֆրիկական երաժշտության թեմաները, մեղեդիները, ռիթմերը, համապատասխանաբար դա նպաստեց ջազային երաժշտության զարգացմանը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

15. Ամերիկայում ջազը փոխեց պատկերացումները երաժշտության և մարդկային հարաբերությունների մասին:  
Ստորև թվարկածներից ո՞րը չի ամրապնդում այս կարծիքը:

- I. Ամերիկյան մշակույթում ջազը դարձավ անհատականության և ինկլյուզիվության խորհրդանիշ,
- II. ջազային երաժշտության կատարողի տրամադրվածության, թե այլ կատարողի նկատմամբ վերաբերմունքի համաձայն կարող է փոփոխվել մեղեդին, հարմոնիան, մետրը,
- III. ամբողջ ջազբեմը յուրաքանչյուր անդամին տալիս է հնարավորություն, յուրովի արտահայտելու ասելիքը, որի հետևանքով միմյանց երաժշտությունը ի նկատի ունենալը դառնում է երկրորդական:

- ա) Միայն I և II
- բ) Միայն II
- գ) Միայն III
- դ) Միայն II և III

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

## Համանուններ

*Համանունների տեսակի ստորև տրված առաջադրանքներում կիրառված բառերից մի քանիսը հանդիպում են տեքստում (նման դեպքում բառի կողքին նշված է համապատասխան պարբերությունը): Ուշադրությամբ ընթերցե՛ք, ինչ է պահանջվում յուրաքանչյուր առաջադրանքում և դրանից հետո միայն ընտրեք արդարացված պատասխանը: Առաջադրանքը ճիշտ կատարելու գործում կարող է օգնել տեքստը:*

16. Ստորև թվարկածներից ո՞ր գույգի բառերի միջև կա այնպիսի առնչություն, ինչպիսին գույգում է –  
**գաղափար : ղեկավար կարծիք:**

ա) կրեդո (հավատամք) : քաղաքական համոզմունք

բ) տեսակետ : որոշում

գ) հայեցակարգ : ելակետային սկզբունք

դ) կարծիք : ռազմավարական պլան

ե) հիպոթեզ : ապացույց

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)



17. Ստորև թվարկածներից ո՞ր գույգի բառերի միջև կա այնպիսի առնչություն, ինչպիսին գույգում է –  
երաժշտություն : ջազ:

- ա) սպորտ : եզրափակիչ
- բ) նկարչություն : նատյուրմորտ
- գ) գրականություն : վերնագիր
- դ) գիտություն : հոդված
- ե) արիա : վոկալ

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

18. Ստորև թվարկածներից ո՞ր գույգի բառերի միջև կա այնպիսի առնչություն, ինչպիսին գույգում է –  
բարոյականություն : բարոյագիտություն :

- ա) քաղաքակրթության պատմություն : մշակույթ
- բ) գեղարվեստական հոսանք : էսթետիկա
- գ) երաժշտության տեսություն : հարմոնիա
- դ) կեղծ պատկերացումներ : հավատ
- ե) մարդու մտածողություն : փիլիսոփայություն

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

19. Ստորև թվարկածներից ո՞ր գույգի բառերի միջև կա այնպիսի առնչություն, ինչպիսին գույգում է – ինպրովիզացիա : հանպատրաստից (նախօրոք չպատրաստվել):

- ա) մեկնաբանություն : մանրակրկիտ
- բ) քննադատություն : անկողմնակալ
- գ) թարգմանություն : բառ առ բառ
- դ) ուսումնասիրություն : հանգամանորեն
- ե) ապաշխարություն (զղջում) : անկեղծորեն

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

20. Ստորև թվարկածներից ո՞ր գույգի բառերի միջև կա այնպիսի առնչություն, ինչպիսին գույգում է –  
պերֆորմանս : ինքնարտահայտում :

ա) ցույց : բազմություն

բ) օլիմպիադա : հաղթանակ

գ) մարմնավորում: կերպարանավորում

դ) շքերթ : տպավորություն

ե)անակնկալ : հաճույք

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

## Տրամաբանություն

*Այս տեսքի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:*

21. Միջազգային արշավախմբի մասին տրված են ճշմարիտ տեղեկություններ.

- Խմբի շատ անդամներ գիտեն գերմաներեն:
- Խմբի շատ անդամներ գիտեն իսպաներեն:
- Գերմաներեն գիտեցող բոլոր անդամները գիտեն նաև անգլերեն:
- Իսպաներեն գիտեցող ոչ մի անդամ չգիտի անգլերեն:

Ստորև թվարկածներից ո՞ր դրույթն է անպայման ճշմարիտ:

- ա) Խմբի բոլոր անդամները, ովքեր գիտեն իսպաներեն, գիտեն նաև գերմաներեն,
- բ) Խմբի բոլոր անդամները, ովքեր գիտեն գերմաներեն, գիտեն նաև իսպաներեն,
- գ) Խմբում չկան գերմաներեն գիտեցողներ, ովքեր չգիտեն իսպաներեն,
- դ) Խմբում կան գերմաներեն գիտեցողներ, ովքեր իսպաներեն չգիտեն,
- ե) Խմբում կան անգլերեն գիտեցողներ, ովքեր իսպաներեն գիտեն:

## 22. Տրված է.

Այս պատկերասրահում չկա իմպրեսիոնիստների կողմից կատարված ոչ մի նկար:

Ստորև թվարկածներից ո՞ր դրուժն է անպայման սխալ, եթե տրված դրույթը ճշմարիտ է:

- ա) Որոշ նկար, որը չկա այս պատկերասրահում, իմպրեսիոնիստների կողմից չի կատարված,
- բ) որոշ նկար, որը իմպրեսիոնիստների կողմից է կատարված, չկա այս պատկերասրահում,
- գ) որոշ նկար, որը իմպրեսիոնիստների կողմից չի կատարված, այս պատկերասրահում է,
- դ) որոշ նկար, որը այս պատկերասրահում է, իմպրեսիոնիստների կողմից չի կատարված,
- ե) որոշ նկար, որը իմպրեսիոնիստների կողմից է կատարված, այս պատկերասրահում է:

**23.** Հետազոտության համաձայն, վերջին տարվա ընթացքում աճեց դեռահասների շրջանում համակարգչային խաղերի գործածության ցուցանիշը: **Նշված գործոնով բացատրեցին փորձագետները դեռահասների առաջադիմության նշանակալից վատացումը վերջին տարվա ընթացքում:**

Թվարկածներից ո՞րն է ավելի շատ կասկածի տակ դնում առաջադրանքի պայմանում տրված բացատրության արդարացիությունը:

- ա) Հայտնի է, որ համակարգչային խաղերով տարված դեռահասների մոտ նվազում է լսած բառերը մտապահելու ունակությունը,
- բ) հայտնի է, որ համակարգչային խաղերով տարված դեռահասների մոտ նվազում է ուղեղի այն հատվածների ակտիվությունը, որոնք ինքնավերահսկողության մեխանիզմների համար են պատասխանատու,
- գ) պարզվեց, որ համակարգչային խաղերով տարված դեռահասների քնի տևողությունը օրուգիշերում շատ ավելի պակաս է, քան նրանց հասակակիցների մոտ, ովքեր նման խաղեր չեն խաղում,
- դ) վերջին տարիների ընթացքում համաճարակի պատճառով ուսումնառությունը փոխադրվեց առցանց ռեժիմի, այդ ժամանակաշրջանում աճեցին ծնողների գանգատները դեռահասների ագրեսիվ վարքի կապակցությամբ,
- ե) վերջին տարվա ընթացքում համաճարակի պատճառով ուսումնառությունը փոխադրվեց առցանց ռեժիմի, դպրոցների մեծ մասի մոտ չհայտնվեց սարքին համակարգչային սարքավորանք բոլոր ուսուցիչներին ապահովելու համար:



24. Տրված է.

- իմ սենյակում ոչ մի իր հարմարավետ չէ:
- Իմ սենյակում որոշ իր պատրաստված է փայտից:

Ստորև թվարկածներից ո՞րն է բխում այս երկու դրույթներից:

ա) Փայտից պատրաստված որոշ իր հարմարավետ է,

բ) որոշ հարմարավետ իր փայտից չի պատրաստված,

գ) փայտից պատրաստված որոշ իր հարմարավետ չէ,

դ) իմ սենյակում որոշ իր ոչ հարմարավետ է և ոչ էլ փայտից է պատրաստված,

ե) որոշ իր փայտից է պատրաստված և միևնույն ժամանակ հարմարավետ է, բայց դրանց շրջանում իմ սենյակի իրերը չկան:

25. Դաթոն, Նաթիան, Քեթին և Գիորգին սովորելու ուղևորվեցին եվրոպական տարբեր քաղաքներ. Պրագա, Բեռլին, Վարշավա և Ամստերդամ: Հայտնի է, որ ստորև տրված չորս տեղեկությունից միայն մեկն է ճիշտ:

- Դաթոն ուղևորվեց Ամստերդամ:
  - Քեթին Պրագա չի ուղևորվել:
  - Նաթիան Ամստերդամ չի ուղևորվել:
  - Գիորգին Ամստերդամ չի ուղևորվել:
- Ո՞ր քաղաքը ուղևորվեց Քեթին:

ա) Պրագա,

բ) Ամստերդամ,

գ) Վարշավա,

դ) Բեռլին,

ե) տրված տեղեկատվությունը դա որոշելու համար բավարար չէ:

## Նախադասությունների լրացում

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:*

*Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կստացվի իմաստով արդարացված նախադասություն:*

26. Մտածողության լավագույն դպրոցը նրա պատմության ուսումնասիրումն է: ——— , որ նա, ով մտածողության պատմությունը ——— , անձամբ ——— օրիգինալ (ինքնատիպ) և ինքնուրույն մտածել: ——— անվիճելի է, որ ——— մտածողության պատմությունը, նրա փորձերն այս ուղղությամբ ——— .

- ա) Ակնհայտ է, գոյություն չունի այն բանի երաշխիք, / չգիտի / չի կարողանա / Համապատասխանաբար, / ով կգիտենա / շատ ավելի հաջողակ կլինեն
- բ) Համոզված կարող ենք ասել, / չգիտի / չի կարողանա / Համապատասխանաբար, / ով կգիտենա / պարտության կլինեն դատապարտված
- գ) Ակնհայտ է, գոյություն չունի այն բանի երաշխիք / կսովորի / կկարողանա / Բայց / ով չի գիտենա / պարտության կլինեն դատապարտված
- դ) Համոզված կարող ենք ասել /կսովորի / կկարողանա / Բայց նաև այն / ով չի գիտենա / շատ ավելի հաջողակ կլինի

27. Թումաս Նագելի կարծիքով, չղջիկը գիտակցաբար ըմբռնելու ունակություն ունի: Թեև չղջիկների զգացողական համակարգը մեր զգացողականության ———, ճիշտ այդ պատճառով մենք ——— կկարողանանք պատկերացնել, թե ինչպիսին է աշխարհի չղջիկական ընկալումը: Գիտակցության ——— էության պատճառով, ———, օբյեկտիվորեն, գիտական մեթոդներով բացատրել այլ տեսակների գիտակցության բնությունը:

ա) նման է / հեշտությամբ / օբյեկտիվ / անհնար է

բ) նման է / հեշտությամբ / սուբյեկտիվ / հեշտությամբ հնարավոր է

գ) ոչ մի ձևին նման չէ / երբեք / սուբյեկտիվ / անհնար է

դ) ոչ մի ձևին նման չէ / երբեք / սուբյեկտիվ / հեշտությամբ հնարավոր է

**28.** Ավանդական պատմագրության համաձայն, պատմաբանի գլխավոր աշխատանքային դաշտը պետական արխիվներն էին: — այլ տիպի —: Ժամանակակից դպրոցների ակտիվացման արդյունքում —, նշանակալիորեն — աղբյուրների ըմբռնման նախկին հայեցակարգերը, պատմաբանի հետաքրքրության տիրույթում ընկան —:

- ա) Թեև / աղբյուրները նույնպես ակտիվորեն էին կիրառվում / դրան հակառակ / փոխվեցին / ամեն ինչ, ինչին մարդու ձեռքը դիպել է
- բ) Համապատասխանաբար/ աղբյուրները հազվադեպ էին կիրառվում / դրան հակառակ / փոխվեցին / ամեն ինչ, ինչին մարդու ձեռքը դիպել է
- գ) Թեև / աղբյուրները նույնպես ակտիվորեն էին կիրառվում / նախկին փորձի նկատառումով / չեն փոփոխվել / միայն կոնկրետ պատմական ժամանակաշրջանների պաշտոնական գրառումները:
- դ) Համապատասխանաբար / աղբյուրները չէին կիրառվում / դրան հակառակ / փոխվեցին / կոնկրետ պատմական ժամանակաշրջանների պաշտոնական գրառումները

29. Հասարակական վերահսկողությունը — անհատական ազատությանը: Դա ակնհայտ է այնպիսի գործունեության դեպքերից, ինչպիսին է խաղը, որտեղ խմբի բոլոր անդամները — : Նման իրավիճակում կանոնները ամրապնդում է — — կամքը կամ ցանկությունը, — առաջնիչ վսեմ ձգտումը: Այստեղ վերահսկումը հասարակական բնույթ ունի, — անհատները գործում են ոչ թե հասարակությունից մեկուսացված, այլ իրենք են ստեղծում հասարակություն:

- ա) չի հակադրվում / ստիպված են ենթարկվել ընդհանուր կանոններին / ոչ թե առանձին անձնավորության / այլ ամբողջ խմբի / բայց
- բ) սահմանափակում և հակադրվում է / ստիպված են ենթարկվել ընդհանուր կանոններին / ոչ թե ամբողջ խմբի / այլ առանձին անձնավորության / բայց
- գ) չի հակադրվում / մասնակցում են կամավոր / ոչ թե առանձին անձնավորության / այլ ամբողջ խմբի / իսկ
- դ) սահմանափակում և հակադրվում է / մասնակցում են կամավոր / ոչ թե ամբողջ խմբի / այլ առանձին անձնավորության / իսկ


## Ընթերցած տեքստի վերախմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերախմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:*



I Մեր կյանքում էմոցիաները (հուզումները) կատարում են սոցիալական հարաբերությունների կառավարման գործառույթ: Որպես դրական սոցիալական կապակցողներ, դրանք մոտիկացնում են որոշ անձանց իրար հետ, իսկ որպես բացասական սոցիալական գրգռիչներ հեռացնում են որոշ անձանց: Մենք խուսափում ենք այն անձից, ով չափազանց զայրացած է, մենք մոտենում ենք անձնավորությանը, ով ժպիտով և խրախուսիչ հայացքով զգացնել է տալիս, որ պատրաստ է մեզ ընդունելու: Որոշ դեպքերում հնարավոր է բողոքելնք այլ անձի նկատմամբ ուժեղ բացասական էմոցիաները՝ նրա կարգավիճակի կամ իշխանության պատճառով:



II Հետազոտությամբ հաստատվում է, որ զգացած էմոցիաները ուժեղ ազդեցություն ունեն այն բանի վրա, թե ինչպես ենք գործում այս կամ այն սոցիալական իրավիճակում: Փորձաքննություններից մեկի մասնակիցները դիտում էին կարճամետրաժ ֆիլմեր, որոնք նրանց մոտ ուրախ, չեզոք կամ տխուր տրամադրություն էին ստեղծում: Այն բանից հետո, երբ ստեղծվում էր տրամադրություն, փորձաքննություն անցկացնողը յուրաքանչյուր փորձաքննվողի (անձի) հանձնարարում էր ինչ-որ փաստաթուղթ բերել ընթերականից (ասիստենտից), որը կողքի սենյակում էր գտնվում: Փորձաքննություն անցկացնողը գրում էր դիմումներ, որոնք փորձաքննվողները կիրառում էին ընթերականին (ասիստենտին) ուղղված խնդրանք ձևակերպելու համար: Գնահատողները (ովքեր չգիտեին, թե փորձաքննվողը ինչպիսի տրամադրություն ուներ) ամեն մի խնդրանքը գնահատում էին սիրալիիրության համաձայն: Ինչպես նկարի վրա է ցույց տրված, տրամադրությունը մեծ ազդեցություն ուներ սիրալիիրության վրա – տրտմած՝ տխուր փորձաքննվողները ամենասիրալիրներն էին: Նրանք բոլորից ավելի սիրալիր էին ներկայացնում իրենց պահանջները ընթերականին (ասիստենտին):

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

III Էմոցիոնալ վիճակը ազդեցություն է գործում նաև մարդու կողմից ուրիշներին օգնություն ցուցաբերելու վարքի վրա: Երբ մարդիկ իրենց լավ են զգում, ապա ավելի սպասելի է, որ նրանք ընդգրկվեն տարբեր այլասեր (ալտրուիստական) վարքում: Բացի դրանից, երբ հետազոտություններից մեկում փորձաքննվողներին զգացնել էին տալիս որոշակի հանցանքում մեղավոր լինելը, նրանք հետագայում օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն էին արտահայտում, հավանաբար սեփական մեղքի զգացումը թեթևացնելու համար:

IV Հետազոտությունները ցույց տվեցին, որ Էմոցիոնալ վիճակը կարող է ազդել նաև ճանաչողական գործընթացների՝ հիշողության, տեղեկատվության վերամշակման, հիմնախնդրի կառավարման և ստեղծագործական մտածողության վրա: Փորձաքննություններից մեկում բժիշկներին խնդրեցին հիմնախնդիրը լուծել, ինչը ստեղծագործական մտածողության որոշակի մակարդակ էր պահանջում: Փորձաքննվողները, որոնց մոտ ստեղծեցին հաճելի տրամադրություն, (փորձաքննություն անցկացնողը նրանց քաղցրավենիքով հյուրասիրեց), զգալիորեն ավելի լավ արդյունք ունեին, քան վերահսկման խմբի բժիշկները, այսինքն՝ նրանք, ում քաղցրավենիք չէին առաջարկել: Նման փաստեր կհայտնաբերենք նաև ամենօրյա կյանքը դիտարկելիս: Օրինակ, մենք ավելի արագ և ջանասիրաբար ենք կատարում գործը, երբ լավ տրամադրություն ունենք:

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

30. Ստորև թվարկածներից ո՞րն է ամենաճիշտ արտացոլում առաջին պարբերության կառուցվածքը:

- ա) Առաջին նախադասությունում ներկայացված է ընդհանուր դրույթ, որը կոնկրետացված է հաջորդ նախադասությունում, իսկ մնացած նախադասություններում բերված են օրինակներ:
- բ) Առաջին նախադասությունում առաջադրված է հարց, որը վերաբերում է ամբողջ տեքստին: Երկրորդ և երրորդ նախադասություններում բերված են կոնկրետ օրինակներ, իսկ վերջին նախադասությունում տրված է եզրակացությունը:
- գ) Առաջին և երկրորդ նախադասությունները ծանոթացնում են հարցին, որը վերաբերում է տեքստին, իսկ երրորդ և չորրորդ նախադասություններում ներկայացված են այս հարցի կապակցությամբ հետազոտության տվյալները:
- դ) Առաջին և երկրորդ նախադասություններում ներկայացված են դրույթները, երրորդ նախադասությունում բերված են կոնկրետ օրինակներ, իսկ վերջում տրված է եզրակացությունը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

31. Երկրորդ պարբերությունում նկարագրված հետազոտության արդյունքները ներկայացված են ն՝ տեքստում և՝ գրաֆիկի վրա: Ստորև տրված դրույթներից ո՞րն է նկարագրում դրանց փոխհարաբերությունը ճշգրտորեն:

- ա) Տեքստում ասված է, որ անձնավորության տրամադրությունը ազդեցություն է գործում նրա սիրալիրության վրա, իսկ գրաֆիկորեն ներկայացված տվյալները դա չեն հաստատում:
- բ) Տեքստում ասված է, որ տխուր փորձաքննվողները բոլորից ավելի սիրալիր էին, իսկ գրաֆիկի վրա ներկայացված տվյալները ցույց են տալիս հակառակը:
- գ) Տեքստի համաձայն, մարդու տրամադրությունը ազդեցություն է գործում նրա սիրալիրության վրա՝ տխուր փորձաքննվողները ամենասիրալիրներն էին, գրաֆիկի համաձայն լրացուցիչ տեղեկանում ենք նաև երջանիկ և չեզոք տրամադրված փորձաքննվողների սիրալիրության մասին:
